

Անխելք Մարդը

Ժամանակին աղքատ մարդ մը կար. որքան կ'աշխատէր, որքան կը չարչարուէր, նորէն ալ նոյն աղքատը կը մնար: Յուսահատ, օր մը որոշեց երթալ Աստուծոյ մօտ եւ հասկնալ, թէ ե՞րբ այս աղքատութենէն պիտի ազատուի, եւ ինքն իրեն համար բան մը խնդրէր: Ճամբան գայլի մը կը հանդիպի.

- Ճամբադ բարի, մարդ-եղբայր, ո՞ւր կ'երթաս,- կը հարցնէ գայլը:

- Աստուծոյ մօտ,- կը պատասխանէ աղքատը,- տարտ ունիմ պատմելիք:

- Երբ որ հասնիս Աստուծոյ մօտ,- կը խնդրէ գայլը,- ըսէ որ շատ անօթի գայլ մը կայ, գիշեր-ցերեկ սար ու ձոր կը պտըտի, ուտելու բան չի գտներ, հարցո՛ւր՝ մինչեւ ե՞րբ անօթի պիտի մնայ. ըսէ՛ եթէ զինք ստեղծէր ես, ինչո՞ւ ուտելիք չես հասցնէր իրեն:

- Լա՛ւ,- կ'ըսէ մարդը եւ կը շարունակէ ճամբան: Շատ կ'երթայ թէ քիչ, կը հանդիպի սիրուն աղջկայ մը:

- Ո՞ւր կ'երթաս, եղբայր,- կը հարցնէ աղջիկը: - Աստուծոյ մօտ:

- Երբ որ տեսնես Աստուծուն,- կ'աղաչէ սիրուն աղջիկը,- ըսէ որ երիտասարդ, առողջ, հարուստ աղջիկ մը կայ, բայց չի կրնար ուրախ ըլլալ, բախտաւոր զգալ ինքզինք. Ի՞նչ պիտի ըլլայ անոր վիճակը:

- Կ'ըսեմ,- կը խոստանայ ճամբորդը եւ կ'երթայ ու կը հանդիպի ծառի մը, որ թէեւ ջրափին կանգնած էր, բայց չոր էր:

- Ո՞ւր կ'երթաս, ով ճամբորդ,- կը հարցնէ չոր ծառը: - Աստուծոյ մօտ կ'երթամ: - Կեցի՛ր, ես ալ ըսելիք մը ունիմ,- կը խնդրէ չոր ծառը,- Աստուծուն կ'ըսես՝ այս ի՞նչ բան է, բուսեր եմ գուլալ ջուրի ափին, բայց ամառ-ձմեռ չոր կը մնամ, ե՞րբ պիտի կանաչիմ: Աղքատը այս խնդրանքն ալ լսեց եւ շարունակեց ճամբան: Այնքան գնաց, մինչեւ գտաւ Աստուծուն: Բարձր ժայռի մը տակ, ժայռին կռթնած, ծեր մարդու կերպարանքով նստած էր Աստուած:

- Բարի օր,- ըսաւ աղքատը եւ կեցաւ Աստուծոյ առջեւ:

- Բարով եկար- պատասխանեց Աստուած,- ի՞նչ կ'ուզես:

- Այն կ'ուզեմ, որ բոլորին հաւասար նայիս, մէկուն աւար չտաս, մէկուն՝ խաւար, ես այնքան կը տանջուիմ, այնքան կ'աշխատիմ, նորէն ալ չեմ կրնար կուշտ փորով հաց գտնել. իսկ շատերը, որ իմ կէսիս չափ ալ չեն աշխատիր, հարուստ ու հանգիստ կ'ապրին:

Գնա,- Աստուած ըսաւ,- բախտ տուի քեզի, գնա՛ վայելէ՛...

- Դեռ բան ունիմ ըսելիք, Տէր,- ըսաւ աղքատը եւ պատմեց անօթի գայլին, սիրուն աղջկան եւ չոր ծառին խնդրանքները: Աստուած բոլորին ալ պատասխան տուաւ եւ աղքատը, շնորհակալութիւն յայտնելով, հեռացաւ: Վերադարձին չոր ծառին հանդիպեցաւ:

- Ինձի համար Աստուած ի՞նչ ըսաւ,- հարցուց չոր ծառը:

- Ըսաւ՝ տակդ ոսկի կայ, մինչեւ այդ ոսկին չհանեն, որ արմատներդ հողին հասնին, դուն չես կանաչիր,- պատմեց մարդը:

- Ալ ո՞ր կ'երթաս. եկուր ոսկին հանէ, ինձի համար ալ լաւ կ'ըլլայ, քեզի համար ալ. դուն կը հարստանաս, ես կը կանաչիմ:

- Չէ՛, ես ժամանակ չունիմ, կը շտապեմ,- պատասխանեց աղքատը,- Աստուած ինձի բախտ տուաւ, պէտք է երթամ բախտս գտնեմ, վայելեմ,- ըսաւ ու գնաց:

Հասաւ սիրուն աղջկան.

- Ի՞նչ լուր բերիր ինձի համար:

- Աստուած ըսաւ, որ պէտք է կեանքիդ ընկեր մը գտնես, այն ատեն տխուր չես ըլլար, ուրախ ու երջանիկ կ'ապրիս:

- Եթէ այդպէս է, ուրեմն դո՛ւն եղիր իմ կեանքիս ընկերը:

- Չէ՛, կեանքիդ ընկեր ըլլաւ ժամանակ չունիմ, Աստուած ինձի բախտ տուաւ, պէտք է երթամ բախտս գտնեմ, վայելեմ,- ըսաւ աղքատը եւ հեռացաւ:

Անօթի գայլը ճամբուն վրայ կը սպասէր.

- Հը, Աստուած ի՞նչ ըսաւ:

- Եղբայր, Աստուծոյ քով գացած ատենս, քեզմէ յետոյ սիրուն աղջկայ մը եւ չոր ծառի մը հանդիպեցայ. աղջիկն ապսպրեց, որ հարցնեմ թէ ինքը ինչո՞ւ չի կրնար ուրախ ապրիլ, ծառն ալ՝ թէ ինչո՞ւ ինք գարուն ամառ չոր է: Աստուծոյ պատմեցի, ըսաւ՝ աղջկան ըսէ իրեն համար կեանքի ընկեր մը թող գտնէ, կը բախտաւորուի, ծառին ալ ըսէ՝ տակը ոսկի կայ, պէտք է այդ ոսկիները հանեն, որ արմատները հողին հասնին եւ կանաչի: Եկայ իրենց պատմեցի. ծառն ըսաւ՝ դէ եկուր հանէ ոսկին տար, աղջիկն ալ թէ՛ ես քեզ կ'ընտրեմ որպէս կեանքիս ընկեր: Ըսի՝ չէ՛, չեմ կրնար, Աստուած ինձի բախտ տուաւ, պէտք է երթամ բախտս գտնեմ, վայելեմ:

- Իսկ ինձի համար ինչ ըսաւ Աստուած,- հարցուց գայլը:

- Քեզի համար ըսաւ՝ անօթի մնաս, մինչեւ անխելք մարդ մը գտնես, ուտես, կշտանաս:

- Քեզմէ աւելի անխելք մարդ ուրկէ՞ գտնեմ, որ ուտեմ,- ըսաւ գայլը եւ կերաւ անխելք աղքատին:

Բարեկենդանը

Ժամանակին այր ու կին մը կային: Այս այրն ու կինը զիրար բնաւ չէին հաւնէր: Մարդը կնոջը կ'ըսէ յիմար, կինը՝ մարդուն, եւ միշտ կը կռուէին: Օր մըն ալ մարդը իւղ ու բրինձ կ'առնէ, մշակի մը շալակը կու տայ եւ տուն կը տանի:

Կինը կը բարկանայ.

- Երբ որ կ'ըսեմ յիմար ես, չես հաւատար. այդքան իւղ եւ բրինձ ինչո՞ւ համար առեր բերեր ես. հորդ տարելի՞ցը կ'ընես, թէ՞ տղուդ հարսանիքը:

- Ի՞նչ տարելից, ի՞նչ հարսանիք, կնի՛կ, ի՞նչ կը խօսիս, տար պահէ, բարեկենդանի համար է:

Կինը կը հանգստանայ եւ կը տանի կը պահէ մարդուն բերածները:

Ժամանակ կ'անցնի. կինը կը սպասէ ու կը սպասէ, բարեկենդանը չի գար: Օր մըն ալ սեմի ն նստած կ'ըլլայ, կը տեսնէ մարդ մը, որ արագ-արագ փողոցէն կ'անցնի: Ձեռքը ճակտին կը դնէ ու կը կանչէ.

- Ախպէ՛ր, ախպէ՛ր, կեցիր:

Մարդը կը կենայ:

- Ախպէ՛ր, բարեկենդանը դո՞ւն ես:

Անցորդը կը տեսնէ, որ այս կնկան ծալը պակաս է, կը մտածէ հա ըսեմ, նայիմ ի՞նչ կ'ըլլայ:

- Հա, ես եմ բարեկենդանը, քոյրիկ ջան, ի՞նչ կայ:

- Ի՞նչ պիտի ըլլայ. մենք քու ծառա՞ղ ենք, որ քու իւղդ եւ բրինձդ պահենք. ինչքան որ պահեցինք, չի՞ բաւեր... չե՞ս ամչնար. .. ինչո՞ւ չես գար ապրանքդ տանելու...

- Ինչո՞ւ կը բարկանաս, քոյրիկ ջան, ես ճիշդ ատոր համար եկեր եմ, ձեր տունը կը փնտռէի, չէի գտներ:

- Դէ եկուր տար:

Մարդը ներս կը մտնէ, իւղն ու բրինձը կը շալկէ, եւ կըրցածին չափ արագ կը սկսի վազել դէպի իրենց գիւղը:

Մարդը տուն կու գայ. կինը կ'ըսէ.

- Հա, եղ բարեկենդանը եկաւ, իր բաները շալակը տու ի գնաց:

- Ի՞նչ բարեկենդան ... ի՞նչ բաներ ...

- Էդ իւղն ու բրինձը ... մէկ ալ տեսայ վերէն կու գայ, մեր տունը կը փնտռէր, լաւ մը խայտառակ ըրի, շալակը տուի տարաւ:

- Վայ քու անխելք տունը քանդուի. երբ կ'ըսեմ յիմար ես, յիմար ես... ո՞ր կողմ գնաց:

- Էդ կողմ: Մարդը ձին կը նստի եւ բարեկենդանի ետեւէն կ'իյնայ: Ճամբուն վրայ բարեկենդանը ետեւ կը նայի, կը տեսնէ որ ձիաւոր մը կու գայ. կը գիտնայ որ այդ կնոջ ամուսինը ըլլալու է:

Կու գայ կը հասնի իրեն.

- Բարի օր, ախպէրացու:

- Աստծու բարին:

- Այս ճամբայէն մէկը չանցա՞ւ:

- Անցաւ:

- Ի՞նչ կար շալակին:

- Իւղ ու բրինձ:

- Հա, ճիշդ այդ կ'ըսէի, որքա՞ն ժամանակ եղաւ անցնելուն:

- Բաւական եղաւ:

- Եթէ ձին քշեմ, կը հասնի՞մ:

- Ինչպէ՞ս պիտի հասնիս, դուն ձիով, ինքը՝ ոտքով. մինչեւ ձիոյ չորս ոտքերը փոխէ՝ մէկ, երկու, երեք, չո՞րս, ան երկու ոտքով՝ մէ՛կ-երկո՛ւ, մէ՛կ-երկո՛ւ, մէ՛կ-երկո՛ւ, շուտ-շուտ տ կ'երթայ կ'անցնի:

- Հապա ի՞նչ ընեմ:

- Ի՞նչ պիտի ընես. կ'ու զես ձիոյ քովս ձգէ, դուն ալ իրեն պէս ոտքով վազէ, թերեւս հասնիս:

- Հա՛, ճիշդ կ'ըսես:

Վար կ'իջնէ ձիէն, ձին կը ձգէ ասոր քով, եւ ոտքով ճամբայ կ'իյնայ: Կը հեռանայ թէ չէ, բարեկենդանը շալակը կը բարձէ ձիուն, ճամբան կը շեղէ, կը քշէ: Մարդը ոտքով կ'երթայ, կ'երթայ, կը տեսնէ չի հասնիր, ետ կը դառնայ: Ետ կը դառնայ, կը տեսնէ ձին ալ չկայ: Տուն կու գայ եւ կրկին կը սկսին կռուիլ, մարդը՝ իւղ ու բրինձին համար, կինը՝ ձիուն ն ... Մինչեւ այսօր ալ այս այր ու կինը դեռ կը կռուին: Մարդը կնոջ կ'ըսէ յիմար, կինը մարդուն կ'ըսէ յիմար, իսկ բարեկենդանը կը լսէ ու կը ծիծաղի: